ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԽՆԶՈՐԵՍԿԻ Գ. ՍԵՎՈՒՆՑԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Զարմանահրաշ Սյունիք

68 ժամ
Շաբաթական 2 ժամ
VIII-IX դասարանների համար

Խմբակավար՝ Վերժինե Դալաքյան

2022-2023 ուստարի

Խմբակի **նպատակն** է սովորողներին ավելի խորը ծանոթացնել Սյունիքի մարզին:

Սյունիքը՝ Հայաստանի հարավային մարզը, կարևոր ստրատեգիական դիրք ունի ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի երկրների համար:

Երեխաները կծանոթանան մարզի խնդիրներին, կկարողանան վերհանել որոշ խնդիրներ և կառաջարկեն իրենց լուծման եղանակները:

Սովորողները կծանոթանան բնառեսուրսային ներուժին, կարժևորեն դրանց դերը մարզի և ՀՀ կյանքում:

Կծանոթանան պատմամշակույթային կոթողներին ու վայրերին, կառնչվեն զբոսաշրջային գոտիներին…..

Խնձորեսկը, պատամամշակութային կենտրոն լինելով, կարևոր տեղ ունի Սյունիքի մարզում:

Այսօր մարզը ունի գոյաբանական խնդիր և մեր երեխաները ստացած գիտելիքների արդյունքում իրենց փոքրիկ ներդրումը կունենան ինչպես մարզի, այնպես էլ հարազատ գյուղի՝ Խնձորեսկի զարգացման գործում:

	Թեմա 1 Սյունիքի մարզի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները
Նպատակը	• Ծանոթանալ Սյունիքի մարզի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունների հետ: • Բնական պայմաններին, ռեսուրսներին, բուսական, կենդանական աշխարհին: • Սյունիքի մելիքություններին:
Վերջնարդյունք	• Իմանալ Սյունիքի տեղը ՀՀ-ի սահմանում: • Իմանալ և կարողանալ քարտեզի վրա ցույց տալ սահմանակից պետությունները և մարզերը: • Կարողանալ տեղանքում կողմնորոշվել: • Իմանալ լեռնագրական միավորները, գետերը, լճերը: • Իմանալ Սյունիքի մարզի հատուկ պահպանվող տարածքները: • Կարողանալ վերլուծել մարզի կարևոր դիրքը՝ նշանակությունը ՀՀ-ի և տարածաշրջանի համար: • Իմանալ Սյունիքի թագավորները, ծանոթանալ թագավորների գործունեություններին:
3.	Սյունիքի աշխարհագրական դիրքը
2.	Պատմաաշխարհագրական ակնարկ
2.	Պատմամշակույթայի կենտրոններ
4.	Մելիքական պատմություն
2.	Սիսական նահանգը
2.	Լեռնագրական միավորները
2.	Զանգեզուրի լեռնաշղթա,Սյունիքի բարձրավանդակ
1.	Շիկահողի արգելոց,Գորիսի այրեր
2.	Ջրագրությունը
	Թեմա 2. Բնակչությունը, սահմանամերձ գյուղերը
Նպատակը	• Ծանոթանալ մարզի բնակչության սոցիալտնտեսական վիճակին,միգրացիայի պատճառներին: • Ծանոթանալ մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերին • Սահմանամերձ գյուղերին • Ծանոթանալ տուրիզմի զարգացման նախադրյալներին: • Ծանոթանալ Սյունիքի մարզի տուրիզմի զարգացման նախադրյալներին
Վերջնարդյունք	• Վերլուծել մարզի բնակչության սեռային կազմը, բնական աճը, արտագաղթի հիմնական պատճառները: • Կարողանալ վերլուծել գաղթերը նախկինում ու ներկայում, բացատրել պատճառահետևանքային կապը: • Կարողանալ բացատրել մարզի բնակչության տեղը և դերը ՀՀ-ի կյանքում: • Ուշադրություն դարձնել մարզի քաղաքներին: Ուշադրություն դարձնել սահմանամերձ գյուղերին, նրանց կյանքին:

	• Կարողանալ ՀՀ-ում ներկայացնել որպես տուրիստական մարզ: • Իմանալ Խնձորեսկի նշանավոր մարդկանց:
2.	Բնակչությունը
4.	Սոցիալ-տնտեսական վիճակը
1	Միգրացիա
7.	Տուրիզմի զարգացումը Սյունիքում
2.	Քաղաքները
4.	Սահմանամերձ գյուղերը
4.	Խնձորեսկ
2.	Ճոճվող կամուրջ
2.	Զորաց քարեր
1.	Տաթևի ճոպանուղի
4.	Նշանավոր մարդիկ Խնձորեսկում
4	Գործնական աշխատանքներ
	Թեմա 2.Սոցիալ-տնտեսական վիճակը
Նպատակը	• Ծանոթանալ մարզի սոցիալ-տնտեսական վիճակին, • Ընդերքի ռեսուրսներին • Ներկայացնել մարզի սոցիալ-տնտեսական վիճակը տարբեր ժամանակաշրջաններում:
Վերջնաարդյունք	• Կարողանալ բացատրել մարզի ռեսուրսային ներուժի կարևորությունը ՀՀ-ի տնտեսության մեջ: • Իմանալ օգտակար հանածոնները հանքավայրերով: • Առանձնակի ուշադրություն դարձնել Զանգեզուրի պղնձամոլիբդենի, Քաջարանի մոլիբդենի վրա: • Գործնական արդյունքների միջոցով պարզել բնակչության սոցիալական վիճակը, և դրա բարելավմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում:
2.	Տնտեսության ճյուղային կառուցվածքը
4.	Զանգեզուրի կոմբինատ, Քաջարանի պղնձամոլիբդեն
3.	Գյուղատնտեսության զարգացումը մարզում
5.	Ռազմաքաղաքական դերն ու նշանակությունը
4.	Գործնական աշխատանք՝ Սյունիքը՝ որպես հարավային դարպաս